



Հակոբ Պարոնյան

Ազգային ջոջեր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻԻՉԵՆՏԻՍԵԱՆ

Յովհաննէս Միւհենտիսեան, ձուլիչ, փորագրիչ, ոսկերիչ, թղթադրամներու արարիչ, տպարանապետ, երեսփոխան, Սամաթիա ծնած է 1810 փետրուար 21-ին. այսինքն այն ամսուն՝ որու մէջ, կ'ըսէ չգիտեմ ո՛վ, կիները քիչ կը խօսին:

Հագիւ չորս տարեկան կար, երբ իմացուց ծնողաց, որ ինք այն մարդերէն է, գորս նախախնամութիւնը ստեղծած ժամանակը ստեղծող ոգիով մը կ'օժտէ եւ վերջը թող կու տայ, որ ուրիշներէն միշտ խաբուին: Այդ տարիքին մէջ էր Միւհենտիսեան, եւ օր մը մեղրամոմէ կանթեղ մը շինեց, եւ տեսաւ Միւհենտիսեան, որ բարի է: Իւր յաջողակութենէն քաջալերուած՝ կանթեղն արեց եւ անոր տեղ պզտիկ կատու մը շինեց: Օր մը ետքը կատուէն ընկուզենի մը շինեց, եւ հետեւեալ օրն ալ ընկուզենին դդումի այլափոխեց: Այս ամէնուն մէջ կատարելապէս յաջողելէն ետքն՝ ըսաւ. մարդ մ'ալ շինենք մեղրամոմէ եւ դդումն առնելուն պէս՝ մարդու բարեփոխեց գայն, եւ իւր արարչագործութիւնն կատարեալ եղաւ:

Հայրը տեսնելով, որ իւր տղուն ձեռները հանճար ունին, միշտ կը քաջալերէր զինքն, երբեմն նուէր տալով եւ միշտ խրատ:

Եօթներորդ տարուան մտնելուն պէս թաղային վարժարանը դրկուեցաւ, որ նախնական ուսումներն առնէ: Արդէն այդ թուականին վարժարանները հիմակուաններուն պէս նախնականէն ուրիշ բան չունէին տալու. երբեմն նախնականն իսկ կը պակսէր: Միւհենտիսեան շարունակ աշխատելով

կատարելապես ստրվեցաւ Սաղմոսը, Կտակարանը եւ Նարեկը, որոնք ընթերցանութեան երրորդութիւն մը կը կազմէին այն ատենները:

Երեկոները տուն դառնալուն պէս ծունկ կը չոքէր հօրը առջեւ, որ իբրեւ զբօսանք բաներ կը ստրվեցունէր իրեն. գոր օրինակ՝ գաւաթ մը չափել եւ որչափ ջուր առնելը գտնել, օքթան ըստած գործիքով իրօթիֆայ առնել, ժամը քանի՛ ըլլալն գիտնալ եւ արեւուն ծագումը գտնել: Օքթանը այսօր բնաւ չգործածուիր, վասն զի ամէն մարդ իւր փորէն կարող է գուշակել ժամը քանի ըլլալը:

Երեկոյեան աշխատութենէ աւելցած ժամերն ալ պարապ չէր անցուներ, ձայնագրութեան դաս կ'առնէր նոթաճի պապա Համբարձումէն, որուն կենացը վրայօք ոչինչ գիտենք այսօր: Այնքան կը սիրէր տիւնքեր ով խաղ կանչելն, որ ամէն մէկ երգին բանթալոն մը կը պատռէր, այնքան ուժով կը զարնէր ծունկերուն. եթէ ամբողջ ֆապ մը տիւնքեր ով կարդալու ըլլար՝ տասներկու հատ բանթալոն պէտք կ'ըլլար: Հայերէն ձայնագրութեան մէջ հսկայաքայլ յառաջ երթալէն ետքը՝ երոպականն ալ ստրվեցաւ, ուսկից փափաք եկաւ վրան դաշնակ զարնելու: Եթէ չենք սխալիր, ինք առաջինն եղաւ ազգին մէջ դաշնակ զարնող: Այն ատենները դաշնակն շատերու անձանօթ նուագարան մը ըլլալով՝ անոր ձայնն առնողները փողոցին մէջ կը շարուէին եւ մտիկ կ'ընէին: Դաշնակ զարնելը բան մը չէ, աղէկ զարնելը բան մ'է, եւ Միւհենտիսեանի մատներն այնքան վարժ էին, որ դաշնակին դպչելուն պէս՝ անոր ձայնէն կը զմայլէին եւ թոշտելով կու գային տանիքներու վրայ կ'իջնային ազոռաներն, վասն զի այն ատեններն սոխակ չկար. միայն սոխակ մը կար դրացոյն տունը, որ իւր գեղգեղանքներովն կը պատասխանէր. բայց ափսոս, որ այն սոխակն ալ մեր բախտէն Արքատիի էր: Այնուամենայնիւ Արքատիի սոխակն էր, որ Միւհենտիսեանի փառքը կ'աւելցունէր, ոչ թէ անոր համար, որ աւանակին ձայնին քով դաշնակինը բարձր տեղ մը կը բռնէր, այլ անոր համար, որ դաշնակով աւելի դժուար է իշու գգացումները արթնցնելը՝ քան թէ սոխակի մը: Միթէ պերճախօսութեան արհեստին մէջ ալ այսպէս չէ՞... Ջգայուն սիրտ մը յուզելու համար Տենութենէս շատ է, իսկ անզգաները յուզելու համար՝ Կիկերոններ քիչ են: Կրակն միեւնոյն կերպով չներգործեր բամբակի եւ ապառաժի վրայ: Սովեալներու համար հրատարակուած սրտաճմլիկ եւ աղեխարշ նամակներն այնչափ կ'ազդեն անզգայ հարուստներու վրայ, որչափ փոքրիկ կայծ մը՝ ապառաժի մը վրայ: Ա՛յ

դիրին է գուշակել, կարծենք, որ Միհենտիսեան քաջ դաշնակահար մ'էր:

Երաժշտական ճիւղին մէջ դաշնակահարութեամբ շատացաւ. երոպական ձայնագրութենէ լուսատրուելով՝ հայկականին մէջ եղած թերութիւններն ուղղեց. ձայնագրութեան կանոնները պարունակող տետրակ մը շինեց եւ յետոյ, երբ տպարանապետ եղաւ, նոյն նոթա ներուն հայր եւ մայր գիրերը պատրաստեց, բայց պարագաները թող չտուին, որ այդ հայր եւ մայր գիրերն իրենց գաւակներն ի լոյս ընծայէին: Ասոնցմէ գատ ունի նաեւ շինած պզտիկ երգեհոն մը, որ Էվիճը կը պարունակէր իւր բեշրեֆ ովն, պեսթէ ովն, շարքի ներովն եւ սենայի ովը:

Եւ որովհետեւ երգեհոնով Էվիճի ֆասլը եղանակելն հաց չտար մարդուս, Միհենտիսեան ոսկերչի մը քովը մտաւ: Իւր բնատուր ձիրքովն քիչ ժամանակի մէջ յառաջ գնաց սատեք եւ արութեան մէջ: Ինչ որ մեղրամոմէ կը շինէր պզտիկութեան մէջ՝ արծաթէ եւ ոսկիէ շինել սկսաւ: Ազգային բոլոր նշանատրներուն գործերն կը շինէր, եւ ամէնուն սէրն ու համակրութիւնը գրաւած էր:

Ադամին գործած յանցանքը նկատողութեան առնելով՝ կ'ըսեմ, թէ արժանի էր, որ իւր ճակատին քրտինքովն ապրելու դատապարտուէր եւ ոչ թէ շատ մը պէյ երու կամ Էֆենտի ներու պէս մեր ճակատին քրտինքովն ապրելով՝ Վոսփորի ծովափունքին վրայ պալատի պէս տուներու մէջ Եւան քովն առնէր եւ փափուկ բազմոցներու վրայ նստէր: Նոյնպէս օձին ալ խորամանկութիւնը տեսնելով, կ'ընդունիմ՝ թէ գետնի վրայ սողալով քալելու պատժոյն ենթարկուելու էր, եւ ոչ թէ մեզի պէս կանգնելով քալելու էր, ինչպէս կը քալէր անշուշտ առաջ. բայց երբ Միհենտիսեանի բարի վարքը կը դիտեմ, հետաքրքիր կ'ըլլամ հասկնալու, թէ ի՞նչ մեղք գործած է արդեօք, որ տպարանապետ ըլլալու ծանր պատիժը կրելու դատապարտուած է: Գիտէք հարկաւ, որ մեր ազգին մէջ տպարանապետ ըլլալն անանկ ծանր պատիժ մ'է, որ ոչ սողալով քալելու կը նմանի, ոչ ալ ճակատի քրտինքով ապրելու պատժոյն, որուն այսօր ամէնքս ալ կը փափաքինք եւ չենք կարող արժանի ըլլալ... ինչ որ պատիժ էր Ադամայ օրով՝ վարձատրութիւն կը համարուի այսօր Պոլսոյ մէջ: Ադամ արգիլեալ ծառէն կերաւ, ետեւը բացուեցաւ եւ վերջէն թզենիով գոցուեցաւ. պատասխան տուէք ինձ, ո՛վ պատմագէտներ, այս տպարանապետներն այդ արգիլեալ ծառն ամբո՞ղջ կ'լլեցին, որ իրենց ետեւը

միշտ բաց է եւ բնաւ չզոցուիր... հապա դասատուները, որ բան մը կերած չունին խեղճերը... հապա խմբագիրներն, որ միսի վրայ գաղափար չունին, ինչպէս կոյրերը գոյնին վրայ: Պատասխան չէք տար. ես ալ չեմ ուզեր, թող սա ալ Լոյսի բաժանորդագիրներուն քովն երթայ, երբ որ Լոյսի շրջանն լրանայ՝ այն ատեն կու տար: Մենք Միւհենտիսեանի դառնանք:

1839-ին ազգը Արապեան տպարան մ'ունէր միայն, եւ Մանուէլեան կը փափաքէր տպարան մը հաստատել Ճեմարանի մէջ, որ նոր բացուած էր: Մանուէլեան իր այս փափաքը կը հաղորդէ Թադեոս Տիւրքեանի, որ Բերա ելնելով հրեայ փորագրիչ մը կը գտնէ եւ հայերէն հայր գիրեր շինել կու տայ անոր: Տիւրքեան կը տեսնէ, որ այդ հրէին շինած գիրերը հայերէն չէին, այլ տարբեր ձեւով ու ճաշակով խել մը նշաններ, որոնք անոնց գործին միայն կու գայ, որ կը փափաքին նոր լեզու մը ստեղծել: Տիւրքեան կը ստիպուի հրաժարիլ այս ձեռնարկութիւնէն եւ Միւհենտիսեան Խաչատուր Միսաքեանի թելադրութեամբ եւ ընկերակցութեամբ ծախու կ'առնէ Տիւրքեանի գիրերն, որոնք հրէին շինած հայրերուն եւ Տիւրքեանի պատրաստած մայրերուն ծնունդն էին:

Միւհենտիսեան այդ հայրերը եւ մայրերը կը կոկէ եւ այնպիսի ձեւ մը կու տայ անոնց, որ ճաշակը կը հաւնի: Այս արհեստին մէջ մտնելուն պէս հոգով եւ մարմնով աշխատեցաւ, որ տեսակ տեսակ գիրեր պատրաստէ: Մէկ երկու տարիէն զգալով, որ մինակ աշաց տեսութեամբ շինելն շատ դժուար բան էր, գործիք մը հնարեց, որուն մէջ փորագրուելիք պողպատն անցընելով կրնար նոյն պողպատին ծայրը բարակ եւ սրածայր պողպատով մը աղիւսակներ գծել գիրերուն, սիւներուն եւ միջոցներուն հաստութեանը, ծռութեանը եւ բարձրութեանը չափով, եւ այն գիծերուն համեմատ կը փորագրէր, որով եթէ այբ մը շինել ուզէր՝ այբ ին երեք սիւնը հաւասար հաստութեամբ, հաւասար ծռութեամբ եւ հաւասար երկայնութեամբ կ'ըլլար: Ինչպէս կը տեսնուի, այբ ին ամէն կողմը հաւասարութիւն կար, մինչդեռ Թուրքիոյ եւ ո՛չ մէկ կողմը կայ այս հաւասարութիւնը: Այս գործիքը շինելէն ետքը՝ ուրիշ գործիք մ'ալ հնարեց, որով հայր գիրը պղինձին վրայ մասնուի ճնշմամբ կը զարնէր եւ ոչ թէ կռանի հարուածով, ինչպէս կ'ընէին ուրիշները:

1840-ին Միւհենտիսեանի շնորհիւ Պոլսոյ մէջ առաջին անգամ մաքուր Օրացոյց տպուեցաւ ի Ճեմ. սրբոյ Երուս. մինչեւ այն թուականը Վենետիկէն կու գային

Օրացոյց ներք. . . եւ շատ անգամ Օրացոյց ներուն գալն ուշանալով՝
պատրիարքարանն օրերը կը շփոթէր եւ Վենետիկ հարցնելու կը ստիպուէր՝ թէ
վաղը շաբա՞թ է: Արդեօք քանի քանի անգամներ Ծնունդի օրը խաչելութեան
աւետարաններ կարդացուած են. ով գիտէ ի՛նչ քաշած է Որդի Մարդոյ մեր
ազգին ձեռքէն. . . Միւսնախեսեան կը փափաքէր տպարան մը բանալ եւ թողու
ճեմարանն, որ գոցուելու վրայ էր, բայց ուրիշ տպարանապետ մը արգելք կ'ըլլար
եւ Ասատուր պատրիարքին միջնորդութեամբ թող չէր տար, որ տպարան
բանար, ուստի Օրացոյց էն գատ բան չէր կրնար տպել ճեմարանի մէջ: Չուրուր
Չեշմէ խանը կը փոխադրէ իւր գիրերն ու մամուլն: Ասատուր պատրիարք
իմանալուն պէս թաքրիւր մը կը գրէ Բ. Դուռը եւ կը պահանջէ, որ գոցուի այդ
տպարանն իրմէ հրաման առած չըլլալուն համար: Աղերսագիր կը մատուցանէ
Բ. Դուռն, որ պատրիարքարան կը դրկէ գինք, ըսելով, թէ գնա՛, պատրիարքէն
հրաման ա՛ր: Պատրիարքարան կ'երթայ, եւ պատրիարքէն կը մերժուի:
Ամիրաները, որոնք կը ճանաչէին եւ կը սիրէին Միւսնախեսեանը, գիշեր մը կը
գտնուին տուն մը, ուր ներկայ էր նաեւ պատրիարքը: Խօսք կը բանան եւ
կ'աղաչեն նորին սրբազնութեան, որ հաճի տպարանի արտօնութիւն շնորհել
Միւսնախեսեանի. պատրիարքը կը սրդողի եւ կը սպառնայ: 1843-ին Բարիզէն
Կրճիկեան Յակոբ Էֆենտին կ'իմանայ եւ իւր թուրք ծանօթներուն կը գրէ հոս, որ
աշխատին Միւսնախեսեան տպարանի բացուելուն: Ասոր վրայ Բ. Դոնէն թաքրիւր
կը գրուի պատրիարքին, որ հրաման տայ: Պատրիարքը մէկդի կը նետէ Բ. Դոնան
թաքրիւրն, ինչպէս որ Բ. Դուռը կ'ընէ հիմա պատրիարքարանի թաքրիւր ներուն:
Այսչափ աշխատութեան ապարդիւն մնալուն վրայ՝ բարեկամները կ'ըսեն
Միւսնախեսեանի.

Մինչեւ որ այս մարդը չմեռնի կամ չհրաժարի՝ դուն տպարան բանալիք չունիս:

Եթէ այս մարդը չմեռնի, ես անօթի՞ պիտի մնամ, կը պատասխանէ
Միւսնախեսեան:

1844-ին կը հրաժարի Ասատուր պատրիարք, որուն կը յաջորդէ Մատթէոս
պատրիարք, որ վերջէն կաթողիկոս եղաւ: Ասոր օրովը բացուեցաւ
Միւսնախեսեան տպարանն, որ մեծ անուն վաստկեցաւ իւր տպած Օրացոյց
ներով, Մաղմոս ներով, Նարեկ ներով, եւ այլեւայլ գիրքերով, Մեղու ով,

Ժամանակ ով, Մեճնուայր հաւատիս ով եւ այլն: Գրաշարները պոչը կտրած գ, 1, դ, 2, չ, ջ, վ, տառերը փնտռելու դժուարութենէն ազատելու համար ծոցագիրները շինեց:

Որչափ մեր ազգին՝ նոյնչափ եւ թերեւս աւելի ծառայութիւն մատուցած է թուրք ազգին: Թաալիք գիրը յօրինեց, որով տպուեցաւ տաճկերէն առաջին անգամ ըհասալիէ իթիքաստիյէ անուն տետրակը: 1867-ին շինեց նեսիհ գիրն, որուն օրինակը տարաւ մեծ եպարքոս Ալի փաշային, որ շնորհակալութեամբ ընդունելով այդ գիրերն, յայտնեց՝ թէ ազգին երախտագիտութեանը արժանի է: Այս գիրով տպուած է հիլյեէի հաքանի անուն տետրակը: Միւհենտիսեան այս գիրերուն համար նուէր առաւ կառավարութենէ, ինչպէս նաեւ ցմահ առնելու պայմանաւ երկու հարիւր դահեկան ամսական կապուեցաւ իրեն, բայց չմեռած կտրուեցաւ այս թոշակն, որ չորս հինգ ամիս միայն տրուեցաւ:

Գիր շինելէն, գիրք տպելէն աւելի թղթադրամի կաղապար շինած է, եւ թղթադրամ տպած է, եւ այս մասին ալ բնաւ գոհողութիւն չէ խնայած հայրենեաց փառացը համար: Առաջին անգամ թղթադրամը ձեռագիր էր, եւ ուրիշ կառավարութիւններու թղթադրամներուն քով շատ յարգ չունէր: Միւհենտիսեան ուզեց, որ մեր կառավարութիւնն ալ ունենայ գեղեցիկ եւ ձեւաւոր թղթադրամ, ուստի 1843-ին կաղապար մը շինեց եւ կառավարութեան ներկայացուց: Կառավարութիւնն առաւ գայն, քննեց եւ հաւանեցաւ եւ հրաման տուաւ, որ տպուի: Թղթադրամները տպուիլ սկսան: Քիչ մը ժամանակ անցնելէն ետքը հրաման տրուեցաւ, որ նորէն տպուի. նորէն տպուեցաւ: Երրորդ անգամ տպուի: Ինչո՞ւ չէ, տպուի: Միւհենտիսեան քաջալերուելով իրեն տրուած խրախոյսէն՝ ուզեց որ աւելի փառաւոր թղթադրամ մը շինէ: Շաբաթ մը աշխատելէն ետքը, ուրիշ ձեւով թղթադրամ մը շինեց եւ կառավարութեան ներկայացուց:

Օ՞ո՞... ասոր խօսք չկայ:

Աս առաջինէն աղէկ է:

Աս սքանչելի բան է, էֆենտի:

Ի՞նչ կ'ըսէք, պէյ, սրկէ քիչ մը բան տպել տա՞նք:

Հարցունելո՞ւ ատելորդ է, տպուի, էֆենտիմ, տպուի:

Նորէն կը տպուի եւ քանի մը ամիսէն Միւհենտիսեան կը կանչուի:

Սա ուրիշ ատելի աղուոր բան մը կրնա՞ս շինել:

Վաղը կը բերեմ, էֆենտի:

Հետեւեալ օրն ուրիշ կաղապար մը կը տանի:

Տեսա՞ր, իմ ուզածս ասանկ էր. սրկէ տպեցէք եւ անունը ֆայըզլը դրէք:

Արագատիպը կը սկսի բանիլ, ամէն դատնալուն քաղաքը միլիոններու մէջ կը խղղէ:

Տարի մը ետքը.

Սա Միւհենտիսեանը չկանչէ՞ք:

Հոս եմ, էֆենտի, հոս եմ:

Ծոյլ մէկն ես դուն, ո՞ւր էր, մեզի նոր կաղապարներ պիտի բերէիր:

Քովս ունիմ հատ մը... հրամանեցէ՛ք, տեսէ՛ք:

Մինչեւ հիմա շինածներուդ ամէնէն աղէկն աս է. տպեցէք ասկէ եւ անունը ֆայըզսըզ դրէք:

Շատ լաւ:

Ֆայիզսըզ ները կը տպագրուին ու քանի մը շաբաթէն ետքը, շրջաբերութեան կը հանուին:

Այս թողթերէն գատ տպագրած է էսհամը ունումիէն, թահուիլաթը միւմթեազէն եւ ուրիշ շատ մը թղթադրամներ եւ արժէթողթեր, որոնք հասարակութենէ այն աստիճան սիրալիր ընդունելութիւն գտան, որ անոնցմէ ոմանք տասներորդ եւ

ոմանք քսաներորդ տպագրութեան արժանացան: Եթէ ասոնք գիրք ըլլային եւ
օտար լեզուներու թարգմանուէին՝ մեծ վաստակ կը ձգէին: Ձեր մտքէն ելած չէ,
որ 1860-ին իյանէի ունումիւ ըսելով կառավարութիւնն ուզեց թղթադրամը
վերցունել: Օրին մէկը յայտարարութիւն մը հանելէն վերջը, թէ կառավարութիւնն
ա՛լ թղթադրամ չպիտի ընդունի՝ 1861-ին նոր եւ գեղատեսիլ թղթադրամներ
հանեց: Այս թղթադրամներն ալ Միւիենտիսեանի գրչին արդիւնքն են: Համրելով
անհնար է լնցունել այս անձին թղթեայ երկասիրութիւններն, որոնք այնչափ
հարստացուցին եւ այնչափ աղքատացուցին երկիրը: Ինքն ալ ոչ նուազ
վնասուեցաւ վաթսուն եօթանասուն գործաւորի ամսական տալու համար,
սեղանաւորներէն տոկոսով դրամ վերցունելով: Այս վնասու հետեւանքն է
տպարանին նախ երեսի վրայ թողուիլն եւ ապա բոլորովին գոցուիլը. թէպէտեւ
յիշեալ տպարանը, ինչպէս բոլոր հայ տպարանները, չէր կարող իւր ծախքը
գոցել հայերէն հրատարակութիւններ ի լոյս ածելով... կեցցե՛ն ազգային
գրականութիւն եւ անօթութիւն:

1874 ապրիլ 25-ին Ղալաթիոյ մաքսատունը Վերագայի սահիիէ ին տպարանը
մտաւ փորագրութեան պաշտօնով, գոր մինչեւ այսօր կը շարունակէ.

Ունի ուրիշ այլեւայլ փորագրութիւններ, որոնց ամբողջութիւնն ամեն. Ա. Ներսէս
պատրիարքն իրմէ ուզած եւ առած է պատրիարքարանի մէջ կախելու համար:

Երեսփոխան ընտրուած ըլլալով՝ քանի մը տարիներ Ազգային ժողովներուն
ներկայ գտնուեցաւ: Ամէն անգամ, որ պատրիարքարանի սնտուկին վրայ իրեն
կարծիքը կը հարցուէր՝ կը պատասխանէր, թէ թղթադրամ հանելէն ուրիշ հնարք
չկայ:

Այս անձը եօթանասուն տարու է այսօր, եւ եթէ իւր արհեստը
կատարելագործելու համար ունեցած փափաքին նայինք՝ դեռ եօթանասուն
տարի ապրելու միտք ունի: Տարիները երբեք չեն նուազեցուցած իւր
ճարտարութիւնը, այսօր երէկէ աղէկ կը փորէ, վաղը այսօրէ աղէկ պիտի գծէ:

Անգործ մնալէ ուրիշ բանէ մը չվախնար. միշտ կ'աշխատի եւ կը փափաքի, որ
քանի մը ատուր մէջ Ղալաթիոյ բոլոր տուները եւ խանութները գնէ:

Չինքը խաբելու համար, ոչ օձի կերպարանք մտնել հարկ է, ոչ ալ աղանիի, յանուն մարդկութեան կարող ես երկու տարի աշխատցունել զինքը եւ չվճարել, պատրուակելով՝ թէ առնելիքներ ունիմ եւ չեմ կարող առնել: Այդ խօսքիդ ոչ թէ միայն կը հաւատայ, այլ կը խղճայ վրադ: Չափագանց առատաձեռն ըլլալու թերութիւնն ունի, եւ այս իսկ էր իւր նատուն դեկը վարողը:

Եթէ կ'ուզէ որ ճանաչել այս մարդը փողոցի մէջ՝ թող աչացն առջեւ բերէ այն մարդուն քալելն, որ տասնրիհինգ տարիէ ի վեր բացակայ գտնուող եղբօրը գալը կ'իմանայ յանկարծ եւ գայն տեսնելու համար տանը ճամբան կը բռնէ: Այսչափը հերիք չէ, պիտի ըսես, պէտք է որ դէմքին վրայ տեղեկութիւն ունենամ: Շատ լաւ: Պգտիկութեան ժամանակ հիւրի մը խահուէ տուած ատենդ չէ՞ հանդիպած երբեք, որ խահուէին գաւաթը դիպուածով իյնայ եւ խահուէն ալ հիւրին վրայ թափուի: Քանի մը անգամ հանդիպած է: Այն ժամուն հայրդ բարկութեամբ ծուռ ծուռ երեսդ չէ՞ նայած: Նայած է: Ահա այն ժամուն ի՞նչ դէմք ունեցար դուն՝ նոյնն ունի այսօր Յովհաննէս Էֆենտի Միւհենտիսեան: